

Երևանյան այսպես

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՔԱԹԱԹԵՐԹ



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՒՂԵՐՁԸ
ՄԱՐՏԻ 8-Ի՝
ԿԱՆԱՆՉ ՏՈՆԻ
ԱՌԻԹՈՎ**

Լուստ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում բոլոր կանանց եւ շնորհավորում Մարտի 8-ի տոնական առիթով:

Նշանակալի այս տոնը եւս մեկ առիթ է վերաթեւորելու մեր ժողովրդի կյանքում կանանց՝ մեր մայրերի, քույրերի ու դուստրերի անուրանալի դերակատարությունը: Դարեր շարունակ հայ կինն է ոգեշնչել ու խանդավառել մեր քաջորդիներին՝ չնահանջող արիությամբ մարտնչելու մեր հայրենիքի, նվիրական մեր ընտանիքների, ազգային ու հոգեւոր սրբությունների պահպանման համար:

Միքելիներ, Մեր մաղթանքն է, որ հարատեւ եւ ամուր մնաք սիրո ու նվիրումի ձեր կատարյալ առաքինության մեջ, որովհետեւ այս շնորհներն են աղբյուրը երջանկության, ստեղծագործության եւ կյանքի առաջընթացի, գոյության գրավականը՝ ընտանիքի, ազգի եւ պետության: Նոր հաջողություններ ենք մաղթում ընտանեկան, ազգային ու պետական կյանքում ներդրվող ձեր նվիրական ջանքերին եւ իրականացում ձեր բարի իդեալին:

Աղոթում ենք, որ Բարձրյալ Աստված Սուրբ Հոգու շնորհները հեղի ձեր եւ ձեր ընտանյաց անդամների կյանքից ներս, պարզեի երջանիկ եւ ուրախ կյանքի տարիներ՝ Իր Սուրբ Աջի հովանու ներքո խնամելով եւ պահպանելով ձեզ, շնորհելով բոլոր օրհնություններ եւ ամենայն բարիք:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեւեամբ. Ամէն»:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորագիրը Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահին



Մարտի 2-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորագիր է հղել տիրար Արմեն Սարգսյանին՝ Հայաստանի Հանրապետության չորրորդ նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական սամակում ասված է.

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք հայրապետական Մեր շնորհավորանքներն ու օրհնությունը Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:

Դուք ստանձնում եք նախագահի պաշտոնը ազատ ու անկախ մեր պետության նորագույն պատմության այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ մեր երկիրն անցում է կատարում կառավարման նոր համակարգի՝ լի առաջընթացի նոր հույսերով ու սպասումներով:

Ուրախ ենք, որ այս ճանապարհին մեր

ժողովուրդը նախագահի պաշտոնը վստահում է Ձեզ, ով ունի կառավարման հարուստ փորձառություն, լայն ճանաչում ու հեղինակություն ինչպես միջազգային ասպարեզում, այնպես եւ հայրենաբնակ ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի ընդարձակ շրջանակներում:

Բարձրյալի զորակցությունը եւ առաջնորդությունն ենք հայցում Ձեզ, մեծարգո՝ նախագահ, որպեսզի Ձեր նախագահության տարիները նորանկախ մեր երկրի պատմության մեջ արձանագրվեն որպես խաղաղության ու անվտանգության ամրապնդման, առաջընթաց ձեռքբերումների եւ ազգային միասնականության ու համերաշխության զորացման շրջան»:

Վեհափառ Հայրապետը նաեւ մաղթել է, որ բարին Աստված ամենառատ իր շնորհներով օրհնի ընտրյալ նախագահին եւ արդյունաշատ կյանքի քաջառողջ ու երջանիկ երկար տարիներ պարգևի նրան:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Բրազիլիայի նորանշանակ դեսպանին

Մարտի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Մենդոսա Սանկտոսին եւ նրա տիկնոջը՝ Սիմոնե Հագե-Նաուեր Ռոզաստի Սանկտոսին:

Նորին Սրբությունը շնորհավորեց դեսպանին նշանակման կապակցությամբ՝ մաղթելով նրան արդյունավոր առաքելություն Հայաստանում: Վեհափառ Հայրապետը կարեւորեց հայ-բրազիլական կապերի ամրապնդումը եւ գործակցության հետագա խթանումը:

Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Բրազիլիայի դեսպանության հետ Մայր Աթոռի սերտ կապերին:

Հայոց Հովվապետը վերհիշեց Բրազիլիա կատարած իր հովվապետական այցելությունները՝ նշելով, որ մեծապես տպավոր-



ված է Բրազիլիայի ժողովրդի զորեղ հավատքով: Գարեգին Բ Կաթողիկոսը նաեւ ուրախությամբ արձանագրեց, որ Բրազիլիայի հայությունը՝ իբրեւ կայացած համայնք, իր կարեւոր ներդրումն է բերում երկրի առաջընթացին՝ ըստ արժանվույն գնահատվելով իշխանությունների կողմից: Այնուհետեւ նորանշանակ դեսպանը Գարեգին Բ Վեհափառին ներկայացրեց առաջիկա իր ծրագրերը, որոնցով պիտի ջանա ավելի ճանաչելի դարձնել Հայաստանը Բրազիլիայում:

Զրույցի ընթացքում դեսպանը կարեւորեց հայ-բրազիլական մշակութային եւ տնտեսական կապերի զորացման ուղղված միջոցառումների իրականացումը, լուսաբանություններ տվեց Բրազիլիայի ժողովրդի հոգեւոր կյանքի վերաբերյալ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Վարդապետական թեզի պաշտպանություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Մարտի 1-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ վարդապետական թեզի պաշտպանություն:

Մասնավոր վարդապետական աստիճան ստանալու համար «Քահանայության եւ քահանայագործության կանոնական-եկեղեցական ընկալումները միջնադարյան Հայաստանում՝ ըստ «Կանոնագիրք Հայոց»-ի» վերնագրով թեզ պաշտպանեց Մայր Աթոռի միաբան Երեմիա աբղ. Աբգարյանը:

Հանձնախումբը նախագահում էր Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ



Եպս Գալստանյանը: Հանձնախմբի անդամներից ներկա էին Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան եպս Ժամկոչյանն ու Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեորգ եպս Արրոյանը:

Պաշտպանության սկզբում ներկաներին ողջունեց հանձնախմբի նախագահ Բագրատ սրբազանը: Այնուհետեւ թեզի վերաբերյալ գրախոսությամբ ելույթ ունեցավ փ. Գ. Ղ. Հակոբ Զեռնեյանը: Ապա հայր Երեմիան ներկայացրեց իր վարդապետական թեզը եւ ընտրված կյուրթի այժմեականությունը՝ պատասխանելով նաեւ հանձնախմբի անդամների եւ ներկաների հարցերին:

Հավարտ բանավոր պաշտպանության՝ քննիչ հանձնախումբը դրական եզրակացություն տվեց կատարված աշխատանքի առնչությամբ եւ արժանի համարեց Երեմիա աբղ. Աբգարյանին շնորհել մասնավոր վարդապետության աստիճան:

Վարդապետական թեզի պաշտպանությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գեորգյան հոգեւոր ճեմարանի սաներ եւ այլ հրավիրյալներ:

Առաջիկա օրերին, Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ, ձեւավորված ավանդության համաձայն, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում կկատարվի մասնավոր վարդապետական աստիճանի տվչության արարողությունը:

Լրատվական կյուրթերը՝ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՄՈՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՎՈՐԳԻ

ՏԻՐՈՋ ՎԵՐՋԻՆ ԱՂՈԹՔԸ ԿԵՐՊԱՐՎԵՍԱՏՈՒՄ

Խորհուրդը

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին երեք տարիների տնօրինությունների շարքում առանձնակի խորհուրդ ու նշանակություն ունի Նրա՝ խաչ բարձրանալու առաջընթաց շաբաթը, որ Եկեղեցում կոչվում է Ավագ շաբաթ, իսկ Ավագ շաբաթի օրերի մեջ՝ թերեւս Ավագ հինգշաբթին: Հիսուսը Ոսնկվայի եւ Հաղորդության խորհուրդների հաստատումից հետո այդ օրը Գեթսեմանի կոչվող այգում առաքյալներին, ուստի նաեւ մեզ, սովորեցրեց մարդու հոգեւոր կյանքի խիստ կարեւոր, առանցքային գործոններից մեկը՝ ճիշտ աղոթելու սկզբունքը, որի հիմքը դրել էր արդեն՝ Տերուհայանի աղոթքը (տե՛ս Մատթ. 2 10-14) որպէս Աստծո՛ւ հետ հաղորդվելու բուն սկիզբ հաստատելով:

Իսկ ի՞նչ է աղոթքը: Աղոթքը մեր անկեղծ գրույցն է մեր երկնավոր Հոր հետ այն պարագայում, երբ անվերապահորեն հավատում ենք Նրա գոյությանը, հավատում ենք, որ Նա մեզ լսում է եւ անսում մեր ձայնին: Աղոթքի միջոցով մեր երախտագիտությունը, սերն ու նվիրումն ենք արտահայտում առ Աստված, ընդունում մեր անքակտելի կապվածությունն ու կախվածությունը Նրանից: Աղոթքը մեր անսակարկ վստահությունն է՝ մեր խնդրանքը կատարելու կամ չկատարելու Նրա արդար տնօրինության հանդեպ, Նրանից՝ մեր գիտակցված եւ չգիտակցված մեղքերի եւ սխալների ներման ակնկալումը՝ անպայմանորեն Նրա կամքի գերակայությամբ, քանզի վստահ ենք, որ թեպէտ մեզ համար Նրա գործերն անընդունելի են, սակայն կամքն արդար է, սերը՝ անշահախնդիր: Մեր Տեր Հիսուսը հավաստիացնում է. «*հնդրեցէ՛ք Աստծուց, եւ Նա կտա ձեզ, փնտրեցէ՛ք եւ կգտնեք, բախեցէ՛ք, եւ կբացվի ձեր առաջ, որովհետեւ, ով որ ուզի, ստանում է, ով որ փնտրի, գտնում է, եւ ով որ բախի, նրա առաջ կբացվի: Ձեզանից ո՞վ է այն մարդը, որից իր որդին եթէ հաց ուզի, միթէ քա՞ր կտա նրան, եւ կամ եթէ ձուկ ուզի, միթէ օ՞ճ կտա նրան: Արդ, եթէ դուք, որ չար եք, գիտեք ձեր որդիներին բարի պարգևներ տալ, որքա՞ն եւս առավել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, որ Նրանից ուզում են» (Մատթ. Է 7-11): Նաեւ՝ «*Եվ երբ աղոթես, չլինես կեղծավորների նման, որոնք սիրում են ժողովարաններում եւ հրապարակների անկյուններում աղոթքի կանգնել, որպէսզի մարդկանց երեւան» (Մատթ. 2 5):**



Նաևավոր երկրային կյանքի յուրաքանչյուր ակնթարթի մեջ:

Հայտնի է, որ ամենից շատ մենք աղոթում ենք, երբ դժվարությունների մեջ ենք, երբ տկարություններ ունենք, երբ երկյուղն է պատում մեզ, երբ հանդիպում ենք տարբեր փորձությունների, երբ մեզ դավաճանում են, անշահախնդիր սիրո՞ւ դիմաց՝ ատում, բարությունը փոխհատուցում չարությամբ ու դաժանությամբ, երբ խիստ տագնապների ու տրտմության մեջ ենք: Հենց այսպիսի հոգեվիճակում էր գտնվում նաեւ Տերը՝ Աստծո՛ւ Որդին, հայտնի գատկական ընթրիքից հետո:

Ինչպէս վերը նշեցինք, Ավագ հինգշաբթի օրը՝ Խորհրդավոր ընթրիքից հետո, «*Հիսուսը, ըստ իր սովորության, ելավ գնաց Ձիթենյաց լեռը. Նրա հետեւից գնացին եւ աշակերտները*»: Ղուկաս ավետարանչի այս խոսքերը վկայում են, որ Տերը հաճախ էր գնում այդ վայրը՝ անհրաժեշտ առանձնության, մտորումների կամ աղոթելու համար, սակայն Տերը հետ հաղորդակցվելու, աշխարհի մակերեսայնությունից կտրվելու եւ տիեզերական Գերբանակության հետ ներդաշնակվելու մղումով:

Օրն արդեն հասնում էր ավարտին, եւ ըստ Մատթեոս ավետարանչի՝ Տերն աշակերտներին ասաց. «*Դուք ամենքդ այս գիշեր իմ պատճառով գայթակղվելու եք, որովհետեւ գրված է, թե՛՝ հովվին պիտի հարվածեն, եւ հոտի ոչխարները պիտի ցրվեն...*»: Այստեղ մեջբերեց Յովհ. Ծործորեցու մեկնությունը.



Ուստի, երբ ինքնամոռաց աղոթում ենք, ընդունում ենք, որ Նա մեր երկնային Հայրն է, որ մենք Նրա օգնության կարիքն ունենք, որ առանց Նրա աջակցության անգոր ենք ու տկար, անկարող ու անօգնական, մտքով՝ թերի, հոգով՝ անկորով, ընդունում եւ գիտակցում ենք, որ մենք Նրա ամբողջության անքակտելի մասն ենք՝ որպէս որդիներ՝ Նրա հարատեւության, իսկ Նա՝ մեր ժամա-

«*Չաքարիայի մարգարտությունն (տե՛ս Չաք. ԺԳ 7) է հիշատակում, որպէսզի ցույց տա, որ կատարվողն (աստվածային) տնօրինություն է, որի մասին մարգարտները նախապէս կարպատեցին: Միեւնույն ժամանակ հորդորում է (աշակերտներին) միշտ ուշադրություն դարձնել (Սուրբ Գրքում) գրվածներին, այլեւ ցույց տալիս, որ Աստծո՛ւ կամքով է խաչվելու, եւ հայտնում, որ (Ինքն) օտար չէ Հին (ուխ-*

տից) եւ նրանում պատմված Աստծուց (տարբեր Աստված) չէ Մարգարտի խոսքը հիշատակեց նաեւ ի մխիթարություն (աշակերտների), ինչպէս որ հովվի հարվածման մասին խոսվեց, այնպէս էլ նախապէս ցույց տրվեց ձեր՝ ոչխարներից ցրվելու մասին, այն, որ ձեր ցրվելու, այսինքն՝ գայթակղվելու պատճառը Հովվի հարվածվելն է ըստ այդ մարգարտության» (Յովհ. Ծործորեցի, Մեկնություն Մատթեոսի Ավետարանի, Էջմիածին, 2010, էջ 327): Ի դեպ՝ Իր գալիք չարչարանքների ու մահվան մասին Տերը հաճախ էր խոսել աշակերտների հետ՝ Իր տառապանքների թույնով լեցուն մահաբեր բաժակը կոչելով նաեւ որպէս մկրտություն. «... կարո՞ղ եք խմել այն բաժակը, որ ես խմելու եմ, կամ մկրտվել այն մկրտությամբ, որով ես մկրտվելու եմ: Եվ մի մկրտություն ունեն մկրտվելու, եւ ինչպէ՛ս եմ շտապում, որ կատարվի» (Մարկ. Ժ 38): Մկրտության խորհուրդն իմանալուց հետո հասկանալի է, թէ ինչու էր Հիսուսն Իր մահը մկրտություն կոչում, քանզի ինչպէս մկրտության ավագանից ծնվում է նոր մարդը, այնպէս էլ մարմնավոր կյանքի վախճանը դուռ է բացում Սուրբ Հոգով վերածնված հոգու կյանքի համար, եւ Տերը կամենում էր օր առաջ բազմել Հոր կողքին՝ Երկնային արքայության մեջ՝ երկրի վրա Իր առաքելությունն ավարտած համարելով:

Ուսուցչի խոսքերը լսելով՝ «*Պետրոսը պատասխանեց եւ ասաց Նրան. «Թեպէտ եւ ամենքը քո պատճառով գայթակղվեն, սակայն ես չեմ գայթակղվի»:* Հիսուսը նրան ասաց. «*Ճշմարիտ եմ ասում քեզ, որ այս գիշեր, դեռ քաղաքը չկանչած, երեք անգամ ինձ պիտի ուրանաս*»: Ինչո՞ւ երեք անգամ: Հայտնի է, որ դեռեւս Հիսուսի երկրային կյանքի ժամանակներում հրեաները երեք անգամ էին կանգնում աղոթքի: Առաջինը աղոթում էին Աբրահամի Աստծուն, երկրորդը՝ Իսահակի, երրորդը՝ Հակոբի: Ուստի, ամենայն հավանականությամբ, կարելի է ենթադրել, որ Տերը կամենում էր ասել, որ Պետրոսը պիտի ուրանար Աբրահամի, Իսահակի եւ Հակոբի Աստծուն: Պետրոսը նրան ասաց. «*Թե քեզ հետ մեռնել իսկ ինձ հասնի, քեզ չեմ ուրանա*»: Նույնը ասացին բոլոր աշակերտները: Ապա նրանց վերցնելով՝ գնաց մի վայր, որ Գեթսեմանի էր կոչվում, եւ նրանց ասաց. «*Նստեցէ՛ք այստեղ, մինչեւ որ գնամ աղոթեմ*»: Եվ Իր հետ վերցրեց Պետրոսին եւ Չեբեդեոսի երկու որդիներին՝ Հակոբոսին ու Հովհաննեսին, այսինքն՝ այն երեքին, ովքեր Տիրոջ փառքին հաղորդակից եղան Թաբոր լեռան վրա, ովքեր ականատես եղան, թէ ինչպէս Տերը հարություն տվեց Հայրուսի մեռած աղջկան: Հիսուսի ընտրությունն ամենեւին պատահական չէր. նրանք երեքն էլ Իր սիրելի աշակերտներն էին՝ ավագ, միջին եւ կրտսեր տարիքային խմբի, երեքն էլ՝ ձկնորս, երեքն էլ՝ Ուսուցչի կողմից արժանացած խորհրդանշական անվանումների. Պետրոսը՝ Վեմ, իսկ Հակոբոս եւ Հովհաննես եղբայրները՝ Բռաներգես, որ արամերեն նշանակում է «ամպրոպի որդիներ»՝ թերեւս նրանց տաքարյուն կամ կրքոտ բնավորության համար: Շարունակությունը՝ էջ 4

Սկիզբը թիվ 1-4

Արդարեւ մեզ պետք էր ճիշտ այսպիսի մի քահանայապետ՝ սուրբ, անմեղ, անարատ, զատուած մեղավորներից եւ բարձրացած ավելի վեր, քան երկինքները...

Թուղթ Երբայեցիներին, Է 26

Էջմիածին քաղցրիկ անուն, շքեմարան շնորհաց, գի դու ես մայր գորովագույ՛... Բերկրույթին մօրն՝ է որդույ՛ք յիրապի:

Սիմոն Երեւանցի

Ուսուցչի գործն իր կոչումը համարող Լեւոն-Կարապետ Պալճյանին հոգեւորական դառնալու հարցում համոզող պատվիրակներից մեկը ժամանակին հանգստացրել էր նրան. «Եղբայր, հիմա դու հոգեւորական եղիր, առաջնորդ կարգվիր, պատերազմից հետո կրկին վերադարձիր քո ուսուցչությանը» (Պապիկյան Յ., Փայտոյան Չ., Ոգեղեն կյանք, Ս. Էջմիածին, 1998, էջ 13):

Սակայն երիտասարդ ուսուցիչ-հոգեւորականի համար Աստծուն ծառայելը զուգակցվել էր ցկյանս ժողովրդին ծառայելու նվիրումով:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՉԳԱՊԱՀՊԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նվիրվում է Վազգեն Ա Ամենայն Յայոց Յայրամէտի ծննդյան 110-ամյակին

Ահա այսպիսի ազգաշեն ու հայրենա-նվեր Կաթողիկոսի էր սպասում Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Լուսավորչի թափուր մնացած գահը, որի ծանր ու տխուր վիճակն աչքերը փակելիս տազնապով արձանագրել էր երջանկահիշատակ Գեորգ Զ Չորեքյան Կաթողիկոսը՝ կցկտուր, բայց ողբերգական երեք բառով՝ «Մե՛ղք է Էջմիածինը» (Վազգեն Ա, Յայրապետ Յայոց, Գիրք չորրորդ (կոնդակներ, քարոզներ, ելույթներ), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1983, էջ 95), «Մե՛ղք է սուրբ Էջմիածինը», հատված Յայոց Յայրապետի ճառից՝ արտասանած իր ծննդյան յոթանասունամյակի հանդիսավոր նիստին, 2. 10. 1978):

Նման արտահայտության համար նա շատ պատճառներ ուներ:

Մայր Աթոռի նյութական վիճակը ստալինյան բռնություններ հաղթահարող Մայր Աթոռին այնպիսի ծայրահեղության էր հասցրել, որ 1954-ի մայիսին Գերագույն հոգեւոր խորհուրդը նախագահող Վահան արք. Կոստանյանը, Ամենայն Յայոց Կաթողիկոս Գեորգ Զ Չորեքյանի հուղարկավորության ծախսերի համար մտահոգված, նամակ է գրում Յայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահին, խնդրում է Էջմիածինը դրամական ծանր վիճակից հանելու միջամտություն անել, օգնել կազմակերպելու Կաթողիկոսի հոգեհանգիստը:

Կաթողիկոսի հուղարկավորությունը կատարվեց անշուք ու ոչ մարդաշատ պայմաններում:

Խրուչչովյան ժամանակները, թվում էր, առանց վայրագությունների էին, սակայն սոցիալիզմից հետո կոմունիզմ կերտող պետության «թիվ մեկ թշնամին», թեեւ ոչ ուղղակիորեն, դեռ մնացել էր Եկեղեցին:

1954-ի հուլիսի 7-ին ԽՍՀՄ կենտկոմի առաջին քարտուղար Ն. Խրուչչովը որոշում է հրապարակում «Գիտաաթեիստական պրոպագանդայում խոշոր թերությունների եւ նրա բարելավման միջոցառումների մասին». համաձայն որի՝ խստացվում էր վերահսկողությունը Եկեղեցու եւ նրա սպասավորների հանդեպ: Սովետական Միության բոլոր երկրներում ստեղծված աթեիստական գաղափարախոսությունը պրոպագանդող կազմակերպությունները ջանք ու եռանդ չէին խնայում՝ տիրող ռեժիմին ծառայելու համար:

Այս պայմաններում Մայր հայրենիքում աշխատանքներ էին տարվում կաթողիկոսական թափուր գաիի արժանի ժառանգորդ գտնելու համար:

Երկրի ներքաղաքական իրավիճակը Յայ Առաքելական Եկեղեցու անտեսված ու սակավաթիվ սպասավորների մեջ կաթողիկոս-առաջնորդի թեկնածության համար արժանավոր որեւէ մեկին տեսադաշտում չէր թողել: Ս. Էջմիածինը գրավիչ չէր նաեւ արտասահմանյան հոգեւորականության համար, ովքեր քաջատեղյակ էին, որ Մայր հայրենիքում օրեցօր ուժեղանում էր աթեիստական քարոզչությունը, Եկեղեցու դեմ պետության կողմից ծավալվում էր շարժում՝ իրավունքների սահմանափակումների տեսքով:

Կաթողիկոսական գահակալի թեկնածության համար շրջանառվում են արտասահմանյան մի շարք թեմերի հոգեւորականների անուններ, որոնցից էր Երուսաղեմի նվիրապետական աթոռից Եղիշե արք. Տերտեյանը: Նա մերժում է առաջարկությունը՝ նրբանկատորեն դիտարկելով, թե. «Էջմիածնում ուժեղ կաթողիկոսի



Կարիք ներկայումս չի գգացվում, քանի որ կաթողիկոսը շրջապատված է քաղաքականությունից լավ հասկացող պետական գործիչներով, ովքեր որեւէ պահին կարող են օգնել, ուղղություն տալ կաթողիկոսին...» (Վավերագրեր Յայ Եկեղեցու պատմության, Գիրք ԺԶ, Վազգեն Ա Պալճեան. Ամենայն Յայոց Կաթողիկոս (1955-1994), Եր., «Մուղնի», աշխ. Գ. Յասիրճեանի, 2008, էջ 93):

Շարունակությունը՝ էջ 5

ԻՆԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)

Սկիզբը՝ թիվ 4

1939 թ. Աբովյանի կյանքում կարող էր կատարվել մեկ էական փոփոխություն: Նրան հայտնի է դառնում, որ Կազանի համալսարանում բացվելու է արեւելագիտական ամբիոն, դասավանդվելու են հայագիտական առարկաներ, եւ մրցույթ է հայտարարված՝ ամբիոնի վարիչի պաշտոնի թափուր տեղի համար: Ինքն էլ է մասնակցում մրցույթին՝ ուղարկելով իր լեզվաբանական երկու աշխատությունները՝ «Նախաշավիղ կրթությանց հայկազյան լեզվի» եւ «Քերականություն ռուսաց վասն հայոց»: Սակայն Պետերբուրգի կայսերական ակադեմիայի արեւելագիտության ամբիոնի վարիչ, Նշանավոր արեւելագետ Մարի Բրոսսեն, ում կարծիքի էին ուղարկել Աբովյանի աշխատությունները, դրսեւորում է ոչ կայուն երկակի դիրքորոշում. նա մի կողմից բարձր է գնահատում Աբովյանի գործունեությունն ու աշխատությունները, մյուս կողմից՝ անհամաձայնություն հայտնում Աբովյանի այն ճիշտ տեսակետին, թե վերջին ժամանակներում գրաբարը վերածվել է հայության մտավոր գարգացումը խոչընդոտող գործոնի, եւ դա է հայության մտավոր հետամնացության պատճառը: Նա նրբորեն մերժում է Աբովյանի թեկնածությունը՝ պատճառաբանելով, թե ավելի նպատակահարմար է առաջադեմ հայացքների տեղ, աշխարհաբարի նախանձախնդիր Աբովյանի գործունեությունը հայրենի միջավայրում. թող իր ջանքերը ներդնի ազգակիցներին մայրենիով դաստիարակելու ազգանվեր գործում: Իսկ Կազանի համալսարանի հայա-

գիտության ամբիոնի վարիչի պաշտոնն ստանձնում է Ստ. Նազարյանը: Դժվար է գնահատել անվանի արեւելագետի այս դիրքորոշումը, սակայն չենք կարող կռահել, թե որքանով արդյունավետ կլիներ Աբովյանի գործունեությունը Կազանում, մինչդեռ նրա թիֆլիսյան գործունեությունը հայտնի է իր արգասավորությամբ:

Թիֆլիսյան հինգ տարիները՝ 1838-43 թթ., ամենից բեղմնավորն էին Աբովյանի ստեղծագործական կյանքում: Այս ընթացքում է նա գրել իր գլխավոր ու լավագույն գործերը: Սակայն նա հաճելի գործիչ չէր ցարական պաշտոնեության համար: Լուսամիտ այդ անհատականության շուրջ գնալով թանձրանում էին ամպերը, խստանում հալածանքները եւ Կրաստանի հայաշատ մայրաքաղաքում Աբովյանի ապրելն ու գործելը դարձնում անկարելի: Նա տեղափոխվում է Յայաստան եւ 1843 թ. ստանձնում Երեւանի նահանգի գավառական դպրոցների տեսչի պաշտոնը: Յայա-ծանրներն ավելի են խստանում: Մանավանդ երբ Յայկական մարզ վարչատարածքային միավորի կարգավիճակը փոխվում է, եւ մարզի փոխարեն ստեղծվում է ավելի սահմանափակ լիազորություններով Երեւանի նահանգը, ու պաշտոնանկ է արվում մարզի վերջին կառավարիչ, կայսերապսակ ասպետ, Աբովյանի մտերիմ դոկտոր Աղաֆոն Սմբատյանի եղբայրը՝ Գեորգ Սմբատյանը: Խ. Աբովյանը համոզվում է, որ գուր էին քրիստոնյա ռուս մեծ տերության հովանու ներքո հայոց ինքնուրույն եւ անկախ պետականություն ստեղծելու եւ հայ-



Գործ էր. Խաբենկյանի

րենիքի վերածնության իր երթմանի պատրանքները: Նրա անձի դեմ դավադրություններ են հյուսում, ցարական պաշտոնյաներն ամեն առիթով նվաստացնում են նրան, մատնում հուսահատության:

Ներսես Ե Աշտարակեցին, ով արդեն ընտրվել էր Ամենայն Յայոց Կաթողիկոս, Աբովյանի միակ հեկարանն էր, որին նա հայտնում էր իր մտահոգությունները: Ցարական պաշտոնյաները ցուցադրաբար մերժել էին դպրոցի ամավերջի հանդիսությունը ներկա գտնվելու՝ Աբովյանի հրավերը: Սակայն ներկա եղած Կաթողիկոսը հիանում է աշակերտների պատրաստվածությամբ, խոստանում նրանցից տասը լավագույններին Մայր Աթոռի միջոցներով ուղարկել արտա-

սահման՝ կրթությունը շարունակելու, սակայն հոգեւոր խորհուրդը գերադասում է այդ միջոցներով վանքի գումեշներին ամռան շոգեթիւն սառը ջրում զովանալու համար լճակներ պատրաստել: Յոգեական բարդ ճգնաժամը գնալով խորանում է: Թիֆլիսում լույս տեսնող ռուսերեն թերթերից մեկում նա 1847 թ. մի անստորագիր հոդված է տպագրում Էջմիածնի հոգեւոր բարձր դասի եւ հենց Կաթողիկոսի դեմ՝ խստագույնս դատապարտելով գումեշների «բարեկեցությունը» հայ երեխաների կրթությունից գերադասելու արտառոց երեւույթը: Նա համարձակորեն դատապարտել է նաեւ Կովկասի ռուսալեզու լրագրերի՝ անընդհատ հովովող ստահող լուրերն ու կեղծավոր քաղաքականությունը, որոնք տարփողում էին բացարձակ մի սուտ, թե իբր Արեւելյան Յայաստանի հայությունը, Ռուսաստանի տիրապետության տակ անցնելով, ապրում է երա- նության ու փառքի մեջ: «Ինչո՞ւ են խաբում մեզ Կովկասի կեղծավոր լրագրերը,- գրել է նա,- թե մեր ազգը փառքի ու բարեբախտության մեջ է, որ իրականում օղաձայն շփուլ է միայն»: Իրականում նա թեեւ փրկվել էր ֆիզիկական բնաջնջումից, սակայն եւթարկվում էր հոգեւոր բռնանշումների եւ ազգային արժանապատվության ոտնահարումների ու մանավանդ մայրենի լեզվի կիրառման ոլորտների սահմանափակումների: Այս եւ այլ պատճառներով կյանքի վերջին տարիներին Աբովյանն ապրել է հոգեկան խոր ճգնաժամ եւ ունեցել դժգոհության ջղաձիգ դրսեւորումներ, որոնցից մեկն էլ հիշյալ հոդվածն էր:

Շարունակությունը՝ էջ 5



Սկզբը՝ թիվ 2, 4

1912-ին Թեքեյանը նորից է անցնում խմբագրական գործի՝ «Լուսարձակում», որը շուտով միանում է «Արեւելքին»:

1913-ին ուսուցչություն է անում Կ. Պոլսի Նոր դպրոցում եւ Գինդիյան վարժարանում, վարում Ազգային հիվանդանոցի գրասենյակի տեսչությունը, իր մասնակցությունը բերում Կեդրոնական վարժարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված միջոցառումներին: Դ. Վարուժանի, Ահարոնի, Զ. Ծ. Սիրունու եւ մի շարք այլ մտավորականների հետ հիմնում է «Աստղատունը» (ատենապետ է ընտրվել Կոմիտասը), որը, սակայն, ունենում է ընդամենը մի քանի նիստ եւ դադարում է գործելուց: Ստեղծագործական առումով եւս տարին արդյունավետ էր. բավական է ասել, որ նա գրում է իր լավագույն գործերից մեկը՝ «Տաղ հայերեն լեզուին» բանաստեղծությունը. «Մրգաստանի՛ մը նման կը սիրեմ քեզ, Դայ՛ Լեզու...»:

1913-ի սեպտեմբերին Թեքեյանը մեկնում է Կեսարիա եւ հիկզ ամիս զբաղեցնում Սուրբ Կարապետ վանքի վարժարանի տեսչի պաշտոնը: Այդ օրերի ապրած իր հուզումների ու գործունեության մասին Թեքեյանը գրեց «Կեսարիա» օրագրություն-հուշագրությունում, որը տպագրվեց տարիներ անց՝ 1921 թ., Կ. Պոլսի «Ժողովուրդի ձայնը - Ժամանակ» թերթում եւ որը 2016-ին, Գր. Պըլտյանի ջանքերով, ա-

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵՋ ԱՌԿԱՆ ՄԻ ԿՅԱՆՔ

Նվիրվում է Վահան Թեքեյանի ծննդյան 140-ամյակին

ռանձին գրքով լույս ընծայվեց Ստամբուլում:

Կ. Պոլսի Ազգային երեսփոխանական ժողովը 1914-ի սկզբին Թեքեյանին ընտրում է իր մնայուն լիազոր ներկայացուցիչը Երուսաղեմի պատրիարքարանում: Մինչ մեկնելը Թեքեյանը մոտ երեք ամիս մնում է Կ. Պոլսում, ողջունում է Կ. Չարյանի կողմից հիմնադրված «Մեհյան» հանդեսի հռչակած գրական հանգանակը, որը նպատակ ուներ արտահայտել հայ ոգին, մշակել «կենսաստորոգ պատվաստումով մը հայ լեզուն», «Չուտ գրականությունը հեռու պահել քաղաքականությունից եւ լրագրությունից» (տե՛ս «Մեհեան», Կ. Պոլիս, 1914, թիվ 1): Ու թե՛ն Թեքեյանի անձի շուրջ հակառակորդների կողմից մղվում էին «անորակելի» պայքարներ, այնուամենայնիվ նույն թվականի ապրիլի վերջերին նա ճանապարհ է ընկնում եւ մայիսի 6-ին հասնում Երուսաղեմ:

Կատարված եղծարարությունների հետեւանքով միաբանությունը երկպառակտվել էր: Թեքեյանը պետք է հանդարտեցներ այդ կռիվը, որ վարվում էր վանքում՝ «խարազանով ու գաւազանով», իրականացնելով Ազգային ժողովի ընդունած՝ վանքի նոր կանոնագրի կիրառումը, կասեցնել այն միտումները, որոնք կատարվում էին շահամոլ վարդապետների կողմից: Սակայն կրոնավորների մի մասը թույլ չի տալիս Թեքեյանին իրականացնել իր պարտականությունները, որի պատճառով կողմերի միջեւ առաջանում են սուր հակասություններ: Բախումն այնքան մեծ է լինում, որ Թեքեյանը նույն տարվա հունիսին հրաժարական է տալիս իր պաշտոնից եւ իր անձնական իրերը թողնելով Երուսաղեմում՝ մեկնում է Եգիպտոս՝ սպասելով Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովի ատենապետ Գաբրիել Նորատունկյանի եւ Չապետ պատրիարքի նոր տնօրինություններին: Նույն տարվա օգոստոսի 2-ին սկսված Առաջին համաշխարհային պատերազմն այլեւս անհնարին է դարձնում Թե-

քեյանի վերադարձը: Այդ հեռացումը նրան ազատում է հայ մտավորականների խմբերի հետ դեպի Չանդըրիի անապատներն աքսորվելուց եւ եղեռնի զոհ դառնալուց: Այս շրջանում Թեքեյանի ծավալած ազգային, մանկավարժական, խմբագրական ու հասարակական բազմաբնույթ գործունեության մեջ առանձնակի երեւոյթ է դառնում 1914-ին Կ. Պոլսում տպագրված բանաստեղծությունների նրա երկրորդ գիրքը՝ «Յրաշալի Յարութիւն» վերնագրով (հեղինակի կողմից ժողովածուի վերջում դրված «Իբրեւ վերջաբան» հակիրճ գրությունում ասվում է, որ վերնագրի «հրաշալի» բառը, անշուշտ, «հրաշքով» կը նշանակէ»), որի հիմնական առաջադրանքը եղերական, բայց եւ ըմբոստ ներկայի պատկերմանն էր ուղղված: Գիրքը պետք է ունենար «Յարալեզք» վերնագիրը, սակայն տպագրվելուց առաջ Թեքեյանը փոխել է այն՝ պահպանելով հարության իմաստը: Ըստ Թեքեյանի՝ բանաստեղծությունը եւս մի «յարալեզ» է, որ կենդանություն պիտի տա ազգին, վերընձուրդի նրա ազգային ու մարդկային արժեքները, բորբոքի հայրենասիրական հույզերն ու ապրումները, նրան մղի նվիրումների: Թեքեյանի գիրքը համահունչ էր այդ նույն տարիներին Տեղյանի գրած ու հրատարակած «Երկիր Նահիրի» շարքի արծարծած տրամադրություններին: Նույն ժողովուրդն էր ու նույն ճակատագիրը: Երկուսի գործերում էլ Զոգեւոր Զայաստանի փրկարար տեսիլը հայրենիքի գոյության խարսխի համարքեք ուներ, որի վրա պիտի կառուցվեին ազգի հավերժացման հիմքերը:

Պողոս Նուբար Փաշայի երաշխավորությամբ 1915-ին Թեքեյանը Միհրան Տամատյանի, Վահան Մալեգյանի եւ այլոց հետ դառնում է Զայ բարեգործական ընկերության եւ Ռամկավար ազատական կուսակցության օրգան «Արեւ» հասարակական-քաղաքական եւ գրական երկօրյա թերթի հիմնադիրը: Թեքեյանը թերթը խմբագրում է մինչեւ 1918 թ. (ընդհատումներով այն

խմբագրել է նաեւ 1926-31 թթ. եւ 1935-ից մինչեւ իր կյանքի վերջը՝ 1945-ը): Իր առաջին հոդվածներից մեկում Թեքեյանն այն միտքն է հայտնում, որ «Այնտեղ (Երկրում - Ա. Ա.) մեր արմատներուն կտրուիլը՝ մեզ ալ կսպանե այստեղ» (տե՛ս «Արեւ», Կահիրե, 1915, հուլիսի 21), իսկ նույն տարվա դեկտեմբերի 15-ի համարում գրում. «... այս մեկ տարին, որ անցավ, դարեր արժեք մեզի, դարերու արդյունքը սրբեց ու տարու Զայ կոչուող ազգի մեջէն»:

Այս շրջանում գրած իր հոդվածներից մեկում էլ այն միտքն է արտահայտում, որ ապրիլյան եղեռնը չպետք է դիտել զուտ ազգային կորուստների դիտակետով. այն մեծ չարիք է՝ ուղղված ողջ մարդկության դեմ, ու ոչնչացում՝ ամեն կառուցողականի ու գեղեցիկի:

1916 թ. սեպտեմբերի 7-ին Թեքեյանը կուսակցական հակառակորդների կողմից ենթարկվում է հարձակման, որի հետեւանքով գրկվում է իր աջ աչքից, ինչը բացասական հետք է թողնում նրա թե՛ անձնական, թե՛ ստեղծագործական ողջ կյանքի վրա:

Դաշնակցական եւ Ռամկավարական կուսակցությունների միջեւ պայքարն այնքան էր սրվել, որ հակառակորդ կուսակցությունը սպառնում էր Թեքեյանի մյուս աչքն էլ հանել:

1931-ին Շ. Շահնուրին Կահիրեից գրած՝ մայիսի 27 թվակիր իր նամակում Թեքեյանն ուշագրավ մի դեպք է պատմում իր դեմ կատարված այդ չարագործության վերաբերյալ: Լարված աշխատանքներից ու ծայրագույն հոգնածությունից հանգիստ գտնելու բաղձանքով Թեքեյանը փափագել է «աղուոր տեղ մը» գտնել, եւ Ալեքսանդրիայի հիվանդանոցներից մեկի առջեւից անցնելիս նրա մեջ միտք է առաջացել, որ իր ցանկացած «աղուոր տեղը» հիվանդանոցում պառկելը կարող է լինել. «... եւ 8 օր չանցած, գրում է Թեքեյանը, աչքս հանեցին, ու այդ հիվանդանոցը տարուեցայ» (Էջ 325):

Շարունակությունը՝ էջ 7

ՏԻՐՈՋ ՎԵՐՋԻՆ ԱՂՈԹՔԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

Սկզբը՝ էջ 2

Երեքն էլ հավատում էին Նրա՝ Աստծո Որդի լինելուն. Պետրոսի մասին տե՛ս Մատթ. ԺԶ 13-20 համարներում, իսկ Չեբեդեոսի որդիներն առաջինն էին, որ խնդրեցին Տիրոջը՝ Երկնքի արքայությունում նստելու Նրա աջ եւ ձախ կողմերում, այսինքն՝ այս երեքն էին, որ անսակարկ ընդունեցին Ուսուցչի՝ Աստված լինելու հանգամանքը: Գրվել ենք նաեւ, որ Զովհաննեսն առաջալին Զիսուսն առավել պատվեց՝ վստահելով նրան իր մոր խնամքը: «Գործք առաքելոց»-ից գիտենք նաեւ, որ այս երեքն էլ Զոգեգալստից հետո աչքի ընկան նաեւ իրենց բուռն քարոզչությամբ:

Եվ ահա Գեթսեմանի այգի մուտք գործելուն Զիսուսն իր հետ վերցրեց միայն վերոհիշյալ աշակերտներին: Աղոթքից առաջ «սկսեց տրտմել եւ տազնապել»: Այն ժամանակ նրանց ասաց. «Զոգիս տխուր է մահու չափ. այստեղ մնացե՛ք եւ ինձ հետ հսկեցե՛ք»: Եվ մի փոքր առաջ գնալով, կամ ինչպես Ղուկաս ավետարանիչն է ասում, «մոտ մի քարընկեց» (ԻԲ 41) հեռանալով, այսինքն՝ այնքան, որ իր աղոթքի խոսքերը լսելի լինեն երեքին էլ, այնպես մենք այսօր չէինք կարող խոսել այդ մասին, Զիսուսն «ընկավ իր երեսի վրա, աղոթեց ու ասաց. «Զայ՛ր Իմ, եթե կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ՝ ինչպես ես եմ կամենում, այլ՝ ինչպես Դու»:

Ղուկաս ավետարանիչը հավելում է. «Եվ Նրան երկնքից երեսց մի հրեշտակ եւ ուժ էր տալիս Նրան. Նա տազնապի մեջ էր եւ ամբողջ հոգով էր աղոթում: Եվ Նրանից քրտիկըք հոսում էր արյան կաթիլների նման՝ շիթ-շիթ գետնին» (ԻԲ 43-44): Ընդգծված այս համեմատությունը խոսում է այն մասին, թե որքան տազնապ ու սարսափ էր ապրում Տերը՝ մոտալուտ մահից առաջ:


Ինչո՞ւ էր մեր Տեր Զիսուսն այդպես տազնապում ու սարսափում մահվան մտքից, սպասվող տառապանքներից ու չարչարանքներից: Գուցե մահն ընդունելու որոշման երկնտրանքի մեջ էր, գուցե այդ «բաժակը» ծանր էր իր համար: Ոչ՝ ամենեւին: Դա ընդամենը խոսում է Նրա մարդկային բնության ժամանակավոր թուլության մասին, կարճատե գայթակղության: Իսկ ահա աստվածային աներեր էր եւ հաստատակամ, ինչպես տեսնում ենք հետընթաց գործողություններում՝ ձեռքակալվելու ժամանակ, Կայիափայի առաջ, Պիղատոսի մոտ, խաչ բարձրանալիս:

Տիրոջ աղոթքի մնացյալ հատվածի մասին ոչինչ չգիտենք, քանի որ առաքյալները, հավանաբար հոգնած լինելով եւ կամ դեռեւս տկար հավատք ունենալով, քուն էին մտել: Զիչենք, որ Կափառնայում Զիսուսը նրանց ուսուցանում էր. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չու-

տեք մարդու Որդու մարմինը եւ չըմպեք Նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա», ասել է թե՛ նաեւ ճշմարիտ հավատք: Իսկ աշակերտները Նոր-Նոր միայն ճաշակել էին դրանք՝ գատկական ընթրիքից հետո: Այստեղ արժե հիշատակել նաեւ Տիրոջ խաչելությունից հետո աշակերտներից երկուսի՝ Էմմավուսի ճանապարհին ունեցած գրույցը. «Մենք ակնկալում էինք, թե Նա է, որ փրկելու է Իսրայելը, սակայն, այս բոլորով հանդերձ, այս երրորդ օրն է, որ այդ բաները կատարվեցին»: Այսինքն՝ աշակերտներն իսկապես տակավին թերահավատ էին Ուսուցչի՝ Աստծո Որդի լինելու ճշմարտության մեջ: Նրանք հոգեպես զորացան միայն Տիրոջ հարություն առնելուց եւ հոգեգալստից հետո:

Մատթեոսը գրում է, որ երբ Զիսուսը գալիս է աշակերտների մոտ եւ նրանց քնած գտնում, Պետրոսին ասում է. «Այդպե՛ս, չկարողացա՞ք մեկ ժամ արթուն մնալ ինձ հետ: Արթուն մնացե՛ք եւ աղոթե՛ք արեք, որպեսզի փորձության մեջ չընկնեք...» (Մատթ. ԻԲ 40-42): Ցավոք, այդ դրամատիզմով հագեցած օրվա մեկ ժամ տեւած Տիրոջ աղոթքից, որ կարող էր մեզ համար խիստ ուսանելի լինել, շատ բան չգիտենք:

Ըստ ավետարանիչների՝ Զիսուսը երեք անգամ ծնկեց աղոթքի, որից հետո նոր միայն հորդորեց աշակերտներին. «Ննջե-



ցե՛ք այսուհետեւ ու հանգստացե՛ք, քանի որ ահա ժամը հասել է, եւ մարդու Որդին մեղավորների ձեռքն է մատնվում: Վերկացե՛ք գնացե՛ք այստեղից, որովհետեւ ահա հասավ նա, ով ինձ մատնելու է» (Մատթ. ԻԶ 45-46):

Այս էր ահա մեր Տեր Զիսուս Զրիստոսի վերջին աղոթքի, կամ ինչպես ընդունված է ասել, Գեթսեմանիի աղոթքի մասին ավետարանիչների՝ մեզ փոխանցած հիմնական շարադրանքը:

Շարունակությունը՝ էջ 6

ԻԱԶՉԱՏՈՒՐ ԱՐՈՒՅԱՆ (1809-1848)

Սկզբը՝ էջ 3

Կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցին, որ անտեղի չէր կրում «Պաշտպան հայրենյաց» պատվանունը, անշուշտ ճանաչել էր անստորագիր հողվածի հեղինակին և ներքուստ համակրում էր նրան ու բարձր գնահատում նրա մտավոր բարձրագույն կարողություններն ու ազգանվեր ազնիվ գործունեությունը: Ուստի քրիստոնեական բարձրագույն ներողամտությամբ նա Արոյանին կարգում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ: Ստեղծված իրավիճակում դա կարող էր փրկություն լինել ծանր հուսախաբության մատնված Արոյանի համար:

1848 թ. մարտին նա արդեն Երեւանի գավառական դպրոցի տեսուչ պաշտոնը հանձնում է Թիֆլիսից գործուղված Թուրքեստանով մականունով մի ուսուցչի և պատրաստվում նոր պաշտոնն ստանձնելու համար մեկնել Թիֆլիս: Սակայն հանգամանքների դժբախտ բերումով դա չի իրականանում:

Կատարվում է ցավալի ողբերգությունը. ապրիլի 1-ի՝ լույս 2-ի վաղ առավոտյան (նոր տոմարով՝ ապրիլի 14-ին) Արոյանը դուրս է գալիս տնից ու անհետանում: Չարագործների ձեռքով նրա սպանության կամ «անհայտ բացակայության» վերաբերյալ ժողովրդի պատմական հիշողության, բանասիրական ու պատմագիտական գրականության մեջ շրջանառվում են ավանդազուրկ հիշեցնող ճշմարտանման տարբեր ենթադրություններ ու վարկածներ, որոնցից, սակայն, ոչ բոլորն ունեն համոզիչ հիմնավորում:

Ըստ այդ վարկածներից մեկի՝ հակացարական (ոչ հակառուսական) տրամադրությունների համար նրան «սեւ կառնթով» քսորել են Սիբիր: Իբր 1853 թ. քսորավայրում նրան տեսնող ու ճանաչող է եղել, իբր մինչև նրա մահը Եմիլյա Լոռզեն՝ որպես քսորականի կին, պետական թոշակ է ստացել (անհավանական է, որ ամուսնուն քսորելով՝ պատժեին ու միեւնոյն ժամա-

նակ նրա կնոջը նպաստ կամ թոշակ տալին): Մի այլ վարկած հավանական է համարում, թե նա ինքնասպան է եղել՝ խեղդվելով Յրագղան գետում, ուր սովորություն է ունեցել վաղ առավոտները սառը ջրով լողանալու: Ակտել Բակունցը 1927 թ. ենթադրել է, թե «անհայտ բացակայող» Արոյանը մեկնել է Եվրոպա՝ այնտեղ ծավալված հեղափոխական շարժումներին մասնակցելու: Այս վարկածը հիմնովին հերքել է պատմաբան Աշոտ Յովհաննիսյանը:

Մտավորականների մի ուրիշ խումբ (Պ. Յակոբյան, Վ. Ավետյան և ուրիշներ) համոզված է, որ Խ. Արոյանը սպանվել է Երեւանում իր պարտապան թուրքերի ձեռքով: «Պնդողներ էլ կան, որ Արոյանին սպանել են», - ՅՍՀ հանրագիտարանում այսպես է գրել ականավոր արքայաճառող Պ. Յակոբյանը: Յակոբյանի է, թե ո՛վ կարող է ենթադրաբար կարծիք հայտնել, եւ ո՛վ կարող է պնդել:

Արոյանի ողբերգական կորստի վերաբերյալ շրջանառվող բոլոր փաստերն ու վարկածները դիտարկելով՝ «Խաչատուր Արոյանի կենսագրության առեղծվածները» գրքում նա առավել վստահ է պնդել իր աննախապաշար տեսակետը: «Վստահելի վավերագրերի և վկայությունների անկանխակալ քննությունը, գրել է նա, - մեջտեղ է բերում կամ նշմարել տալիս մի քանի եական պատճառներ, որոնք կարող էին հավասարակշռությունից հանել Արոյանի անձնական ու գաղափարական հակառակորդներին և նրանց մղել հանցագործության» (Յակոբյան Պ., Խաչատուր Արոյանի կենսագրության առեղծվածները, Էջմիածին, 1997, էջ 355): Այդ եական դրդապատճառներից Պ. Յակոբյանն առանձնացրել է հատկապես երկուսը. Նախ այն, որ Արոյանը վերջին երկու տարիներին կրթական բարձրագույն իշխանություններին ուղղված գեղուցագրերով պահանջում էր ոչնչացնել «մահմեդական մասնավոր



Գործ Գ. Չարդարյանի

նրանց տուն երթուղավ է ունեցել այնքան, որ նրանց վստահել ու պարտքով մեծ գումար՝ այն ժամանակվա 350 ռուբլի է տվել՝ դեռևս պարսկական տիրապետության ժամանակներից մնացած պետական տուրքը մարելու և ընտանիքը կործանումից փրկելու համար: Իսկ Ասադ բեկը, Մահմադ Շաֆիի ավագ ընկերը լինելով, հետապնդել է նրա գեղանի մորը և խանդել Արոյանին: Այլ երկիր մեկնելուց առաջ Խ. Արոյանը հարկադրված պահանջել է վերադարձնել պարտք տված գումարը: Մահմադ Շաֆիի նրան վկայի ներկայությամբ տուն է հրավիրում՝ պարտքը վերադարձնելու, և հատուցում է թուրքավարի:

Իր անձին սպառնացող որևէ վտանգ չկանկարծելով՝ Արոյանն ապրիլի 2-ի առավոտյան գնում է նրանց տուն: Պարտքն առերես վերադարձնում են, հետո Արոյանին սպանելով՝ կողոպտում, իսկ մուրհակը ոչնչացնում են: Մահմադ Շաֆիի այդպիսով ազատվում է 350 ռուբլի պարտքից, Ասադ բեկը՝ սիրո հնարավոր մրցակցից: Արոյանին թաղում են Մահմադ Շաֆիի այգու մի անկյունում, հետո տեղափոխում և կորցնում են հետքերը՝ հորինելով ու տարածելով հայտնի ստահոգ պատմությունները (մանրամասները տես Պ. Յակոբյանի Նշված գրքի «Արոյանի անձը և վախճանը», «Յավելված Բ» և «Խաչատուր Արոյանի անհայտ կորստյան նոր «մեկնաբանում» ուսումնասիրություններում, էջ 347-410):

Այսպես է ավարտվել հայ Պրոմեթեոսի՝ մեծ լուսավորչի ու գրողի՝ Խաչատուր Արոյանի երկրային կյանքը 39 տարեկան հասակում, բայց նրա հոգու և սրտի բոցավառ կրակը ջերմացնում, և մտքի ճառագայթները լուսավորում են սերունդների ճանապարհը:


Շարունակելի
Սամվել ՄՈՐԿԱՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկզբը՝ էջ 3

Մերժման ենթատեքստի նկատառումն ուղղված էր իշխանությանը, որը հանձին էկեղեցու բարձրագույն սպասավորի՝ դարձյալ կամակատար էր փնտրում: Այդ պատմական պահին էր Մայր Աթոռն զգում հոգով ամրապինդ, հավատով ուժեղ, կամքով անսասան, շրջահայաց նվիրյալի, ով կկարողանար ստեղծված իրավիճակներում փրկել Հայ Առաքելական Եկեղեցու օրավուր կործանվող հեղինակությունը:

Ընտրությունը կանգ է առնում Ռումինիայի թեմակալ առաջնորդի՝ Վազգեն Եպիսկոպոսի վրա, որից շատ դրական տպավորություն էին ստացել թե՛ Գեորգ 2 Չորեքչյան Կաթողիկոսի մահվան արարողությանը մասնակցող պատվիրակությունները, թե՛ Գերագույն հոգևոր խորհուրդը: Իր թեմի հոգաբարձ իրականությունը մեծ ջանքերի շնորհիվ բարեփոխած, նրանից բաժանվելու որեւէ ցանկություն չունեցող սրբազանի կյանքում կրկին շրջադարձ էր սպասվում: Նոր պատվիրակություն է բախում իր դուռը՝ այս անգամ Բուխարեստի Սովետական դեսպանատնից՝ ինդրանքով, որ ղնի իր թեմակալությունը Ամենայն Հայոց Կաթողիկոս դառնալու համար: Դարձյալ ընդդիմանալուն հաջորդում է խոնարհումը, մանավանդ երբ լսում ու զարմանում է, որ նման խնդրանքով իր դուռը հասած աթեիստները «Էջմիածնի ներկա վիճակի համար կարմրում են» և Մայր Աթոռի փրկության հույսը փնտրում օտար ափերում: Համաձայնում է՝ հետագայում խոստովանելով, թե վստահ էր, «որ ինչ-որ համարձակ քայլի, ինչ-որ ...զոհվելու» է գնում. «Ի՞նչ գիտեամ, այդ պահին այդ զգացումն ունեի... Մի տեսակ խոնարհվեցի ճակատագրի առաջ՝ հանձն անելով ապագա ամեն դժվարություն» (Պապիկյան Հ., Գալստյան Զ., Ոգեղեն կյանք, Ս. Էջմիածին, 1998, էջ 24):

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ...



Դիմակայելու համար իրեն բաժին հասած դժվարին ժամանակներին՝ նա «հավիտենական իրականություններ» էր փնտրում իր գործունեության համար. «Այդ սրբությունները, այդ հավիտենական արժեքները Մայր Աթոռ Ս. Էջմիածնին է նախ, ապա՝ մեր Մայր հողը, Հայաստան աշխարհը և մեր Մայր հողի վրա ապրող ճշմարիտ, հարազատ զանգվածը հայ ժողովրդի և անոր տեսական, հիմնական շահերը», - հնչեցնում է նա իր հետագա քարոզչությունների և բանաձեռում է իր որդեգրած քաղաքականությունը. խոնարհում սրբությունների առջեւ, այնպես ստիպված պետք է լինե

խոնարհվել մարդկանց առջեւ (Վազգեն Ա Յայրապետ Հայոց, Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1958, էջ 257-258, (Մայր տաճարում ասած քարոզից, 23 նոյեմբերի 1957 թ.):

Կարապետ Պալճյանը գիտեր բուլշեիկյան շրջանում Հայ Եկեղեցու կորուստների, խեղդամահ արված Խորեն Մուրադբեկյան Կաթողիկոսի, Մայր Աթոռը կործանումից փրկած Գեորգ 2 Չորեքչյանի գոհաբերությունների մասին, գիտակցում էր սովետական բարք ու կարգերի՝ իր ժամանակի համար պահանջվող գոհաբերումի չափը:

Եվ չնայած այս հանգամանքին՝ «Իրեն նկատմամբ պետական անձերուն ցոյց տուած պատկառանքն ու յարգանքը բնական երեւոյթներ եղան, որովհետեւ Վազգեն Ա. Յայրապետ գիտեր լսելու և խօսելու ժամանակն ու կերպը, զգայուն էր կացութեանց նկատմամբ, եւ խնդրելու ու ստանալու եւ երբեք չմերժուելու հաւասարակշռութիւնը ուներ, լաւատեսութեամբ, համբերութեամբ, յոյսով, հաւատով, եռանդով ու հայ եկեղեցւոյ հանդէպ իր տածած անկեղծ սիրով» (Մարմարա, 18 օգոստոս, թ. 7520, Ստամբուլ, 2004, (Երջանկայիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, Վախճանման տասներորդ տարելիցի առթիւ գրեց ղկտ. հայր Չավէն Արզումանեանը):

1955-ի սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռում գումարված Ազգային եկեղեցական ժողովի երկրորդ նիստի փակ քվեարկության պայմաններում, «ըստ կարգաց եւ կանոնաց Հայաստանեայց Եկեղեցւոյ», Ամենայն Հայոց 130-րդ Կաթողիկոս է ընտրվում Վազգեն Ա Պալճյանը:

Երկու օր անց տեղի է ունենում Կաթողիկոսի օծման արարողությունը: Ներկաների հիշողության մեջ տպավորվում է անընչելի և հուզիչ պահը. «Եպիսկոպոսները իրենց բթամատներով Ս. Միլունը ճաճանչձեւ տարածեցին Ամենայն Հայոց Յայրապետի գլխին վրայ, սպիտակ քօղ մը ձգեցին, թագը դրին գլուխը և ձեռքը տուին Կաթողիկոսական Մականը: Եպիսկոպոսները կարգով համբուրեցին Հայրապետին ճակատն ու աջը, իսկ միւսները՝ միայն աջը: Այս հոգեպարար արարողությունները տեւեցին չորս ժամէն ւաւիչ» (Պալճեան Խ., Կեանքիս գիրքը, 1967, Ֆրեզնո, էջ 485-486):

Կիլիկյան հայկական պետականության անկումից հետո հայ արքաների «վեհափառ» տիտղոսն ավելի քան 600 տարի անցել էր հոգևոր բարձրաստիճան հայրերին, որոնք պետականության կորստի պայմաններում հայ ժողովրդին համախմբել էին Եկեղեցու շուրջ, իսկ երկու տասնյակ կիլոգրամից ավելի կշռող կաթողիկոսական ճաճանչափայլ շուրջառն արժանապատվորեն կրելու դասեր շատ հայրապետեր են տվել:

Հովհան Օձնեցի Հայրապետը ոսկու փոշին անուշահոտ յուղերով խառնած քսում էր մորուքին և բեհեզ ու ծիրանի էր հագնում՝ զարմացնելու և զայթակղելու աստիճան, սակայն ներքնահագուստը ոչխարի բրդից և այծի մազից էր: Արտաքին շքեղությանը նայողը չէր կարող պատկերացնել, թե Կաթողիկոսն ինչ «դժոխքմբեր գգեստ» էր հագել (Պարեգին Ա Կաթողիկոս, Խորհրդեւ մտիւր..., Ս. Էջմիածին, 1995, էջ 99):

Շարունակությունը՝ էջ 8

Լոյս՝ ի ծածուկ ոչ պարփակի,
Բարձր՝ յընդհանուրը տեսանի,
Չոր առանձինն ինչ նա խօսի,
Ընդ տիեզերս երկիր սփռի:

Ներսես Շնորհալու հանելուկներ


Այսպես է խորհրդածել Ներսես Լամբրոնացին Շնորհալուն՝ իր ավագ ժամանակացին եւ ուսուցչին նվիրված ներբողում:

Ներսես Շնորհալին Պաղատանիների նշանավոր իշխանական տոհմից էր՝ Գրիգոր Մագիստրոսի ծոռը: Ծնվել է 1100 թվականին: Շնորհալին չափազանց հարուստ, բազմաժանր ու բազմաբովանդակ ժամանակություն է թողել: արձակ գործեր՝ ճառեր, թղթեր, մեկնություններ, եւ առավելապես չափածո երկեր՝ տաղեր, բանքեր, շարականներ, հանելուկներ, ներբողներ, մեղեդիներ, գանձեր, վիպաբնարական բնույթի քերթվածներ, պոեմներ:

Շնորհալին այն գրողներից է, որոնց երկերը հրատարակվել են դեռեւս հայ տպագրության արշալույսին՝ 16-րդ դարում: Մատենագրության մեջ պահպանվել են նաեւ նրան նվիրված մի շարք երկեր:

Ներսես Շնորհալին գրականության կոչումը համարում էր ժողովրդի բարօրությանը ծառայելը, «նիրհած հոգիները» արթնացնելը, մարդկանց կրթելը: Ընթերցողի մեջ նա վերակենդանացնում էր նվիրական հիշատակներ, որոնք, ժամանակին հուզող խնդիրների կապակցությամբ, ունեին դաստիարակիչ նշանակություն: Ն. Շնորհալին ուներ կրոնական աշխարհայացք եւ քրիստոնեության չատագով ու պաշտպան էր: Նրա համոզմամբ՝ մարդն օժտված է ազատական գործունեությամբ եւ դրանով ազդում է հասարակական կյանքի վրա: Ուստի եւ, ելնելով ընդհանուր բարօրության շահերից, նա Նարեկացու նման հատուկ նշանակություն էր տալիս մարդու բարոյական կատարելագործմանը: Նա գրականություն է բերել մի նոր տեսակ՝ «Առակք վասն ուրախության մարդկան»: «Առակք» բառն այստեղ ժանրի արդի իմաստը չունի, պետք է հասկանալ «հանելուկներ» իմաստով:

Շնորհալին շատ է օգտվել ժողովրդական բանահյուսությունից, ուստի բանահյուսական ժանրերը եւս նրա միջոցով են առաջին անգամ մուտք գործել հայ գրականություն եւ մշակվելով դարձել գրական նոր տեսակ: Ուսուցողական նպատակով Ներսես Շնորհալին գրել է 300-ից ավելի չափածո հանելուկ, որոնք, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, հեղինակն ստեղծել է աշխարհականների համար, որպեսզի անբովանդակ ու անիմաստ զրույցներով զբաղվելու փոխարեն



մարդիկ ունենան ժամանցի ավելի օգտակար միջոց:

Շնորհալու հանելուկների կյանքը բնությունն է, մարդկային կյանքը, հայ ժողովրդի պատմությունն ու դիցաբանությունը: Հանելուկները գրվել են ժամանակի խոսակցական լեզվով, որը միջին հայերենն է: Այժմ դրանք թարգմանված են նաեւ աշխարհաբար ու հենց այդպես էլ ներկայացվում են: Դրանց կյանքը կիսով վերաբերում է աստվածաշնչյան թեմաներին՝ աբեղա, միակեց, դրախտ, ապաշխարանք, առաքյալք, կանթեղ, Աբել եւ Կայեն, Աբրահամ, Ադամ, Դավիթ, Դովտ եւ այլն: Կան նաեւ Հայոց պատմության նշանավոր դեմքերին՝ Վարագդատ, Տորք, Տրդատ եւ այլն, վերաբերող հանելուկներ: Հետաքրքիր են նաեւ այն բազմաթիվ հանելուկները, որոնք, ստեղծագործել է հոգեւոր բանաստեղծության հայտնի բոլոր ժամանակաձեւերով եւ ինքն էլ ստեղծել է նորերը, հորինված են կենդանիների, պտուղների, տարվա եղանակների եւ այլ երեւոյթների վերաբերյալ, ինչպես՝ ձյուն, երկինք, արեգակ, լուսին, անձրեւ, աշխարհ, ծառ, կշեռք, ճրագ, նուռ, դդում, խաղող, խնձոր, տանձ, ընկույզ, ցորեն, ջրաղաց, ագռավ, այծ, աղվես, արջ, էշ, կատու, կրիա, ուղտ, ջորի, սագ, սիրամարգ, կաքավ, արտույտ, բզեզ, մեղու, մրջեմ, գինի, գիրք, դասակ, դուռ, աշտարակ, աղեղ, սուր, սանր եւ այլն: Հանելուկների մի մասի կյանքն էլ առնված է ժողովրդական

նից: Հայտնի է՝ հանելուկները որպես ինքնուրույն ժանրաձեւ սկզբնավորվել ու զարգացնելով՝ Շնորհալին միաժամանակ հետապնդել է գործնական որոշակի նպատակ. զվարճացնելով սովորեցնել հատկապես ժողովրդական լայն զանվածներին: Ու պատահական չէ, որ հանելուկները Շնորհալին հորինել է ժամանակի խոսակցական լեզվով, եւ որ դրանց մեջ նա «գիտցած է ժողովրդական բանաստեղծության սեպիական գեղեցկությունն ճարտարութեամբ ամփոփելով դնել»: Ավելին. դատելով Կիրակոս Գանձակեցու մի այլ դիպուկ վկայությունից՝ քննարկվող ստեղծագործությունները հորինելիս հեղինակը նկատի է ունեցել հայոց աշխարհիկ կյանքում հանելուկների կենցաղավարման ձեւերից մեկն ու գործնական կիրառության կերպը եւս, երբ, ասենք, ընկերական ուրախ հանդեսին, հանելուկի առաջարկման եւ լուծման խաղին ներկա է կամ նույնիսկ մասնակցում է ժողովրդական մեծ բազմություն:

Շնորհալին ստեղծագործել է հայկական չափերի գրեթե բոլոր տեսակներով, որոնց մի մասի ստեղծողն ինքն է: Հետեւելով Գրիգոր Մագիստրոսին՝ նա իր մեծ ու փոքր ծավալի գործերը գրել է հանգավոր: Հանելուկները եւս, դատելով լոկ հրատարակվածներից, մեծ մասամբ տաղաչափված են 4+4 չափով: Ուշագրավ է, որ նման կառուցվածքի հանելուկներում երբեմն առաջին անգամի

սկզբում մի վանկ պակաս է լինում: Ինչպես երեւում է ձեռագրական տվյալներից, հայ ավանդապահ շրջաններում, տակավին 17-րդ դարում, եղել է մի պատկերացում, որի համաձայն՝ Շնորհալին իր հանելուկներով հանդես է եկել որպես «շերասաց», այն է՝ երգասաց: Այսպես, հիշյալ հարյուրամյակի գրչագրերից մեկում գետեղված է մի շատ յուրատիպ վեճ, որն ընթանում է հանելուկներով: Վիճող կողմերն են Շնորհալին եւ ոմն «կաղ ալեւոր»: Վեճի վերջում գավեշտական գայրությունով «պատասխանեաց ալեւորն եւ ասաց առ Սուրբն Ներսես» հետեւյալը.

*Ես գիտի գրեզ տըր փառաց,
Եւ վարդապետ տիեզերաց,
Դու կիւենտես շերասաց,
Աւեր ջաղաց, գիտոր աղաց:*

Ամենայն հավանականությամբ՝ Ներսես Շնորհալին, հետեւելով ժողովրդական եւ ժողովրդային-մասնագիտացված արվեստին, իր հանելուկների գեթ մի մասը հորինել է որպես աշխարհիկ երգեր, ինչն ունի սկզբունքային նշանակություն գրականության աշխարհիկացման ճանապարհին: Մահմեդական շեյխի (= վանահոր) եւ կաթոլիկ ֆրերի (= եղբոր՝ կրոնավոր իմաստով) նմանեցրած արջի հանելուկի վերջին տողն առնված է ժողովրդական առածից, թե՛ «Արջի աչքը մերու տանձին է».

*Շրիտակ մի կայր գետ ըզֆըրեր,
Ու ինք խաւ ի վեր մուշտակ ուներ,
Խաղայր, քոթլ կենայր ու յաներ,
Ու հետ տանձին զաչերն ածեր:*

Ամպրոպ ու կայծակի հրեղեն եւ անձրեւաբեր աստծուն՝ Վահագնին, ըստ մեր ժողովրդական հավատալիքների, փոխարինել է Եղիա մարգարեն, եւ վերջիս հանելուկի մեջ նկարագրված է աստվածաշնչյան ավանդված գծերով:

Սրանց կողքին կան հանելուկներ, որոնք ավելի բարդ են՝ փոխաբերությամբ, այլաբանորեն տրված բնութագրումներով, որոնք ընկալելու համար ավելի հասուն միտք ու դատողություն է պահանջվում. դրանք լուծվում են համեմատությունների կամ զուգորդությունների ավելի բարդ շղթայով.

Շարունակությունը՝ էջ 7

ՏԻՐՈՋ ՎԵՐՋԻՆ ԱՂՈՒԹՔԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

Սկզբը՝ էջ 4

Ավետարանական այս շարադրանքի խորհրդաբանական ենթատեքստի մասին եկեղեցու, այդ թվում՝ նաեւ Հայ Եկեղեցու շատ հայրեր թողել են խիստ տարողունակ եւ համապարփակ մեկնություններ: Իհարկե այստեղ խնդիր չունենք մեկնություններին անդրադառնալու, մեր նպատակը Գեթսեմանիի աղոթքի մարմնավորումներն են կերպարվեստում: Սակայն մինչ կերպարվեստին անդրադառնալը կամենում ենք խոսել Աստվածաշնչում, մասնավորաբար՝ Ավետարաններում առկա 3 թվի հաճախակի գործածության եւ դրա ոչ պատահական խորհրդաբանության մասին:

Երեքը ոչ միայն համաշխարհային խորհրդաբանության, այլև կրոնական, առասպելաբանական, դիցաբանական, հեքիաթային, գիտական մտածողության մեջ համարվում է ամենադրական թիվը:

Քրիստոնեական վարդապետության

մեջ եւս **երեք** թիվը կարեւոր ու էական խորհրդաբանություն ունի: Արարչագործության երեք աստիճանները՝ քառուց, Ադամի ստեղծումը եւ շաբաթվա օրինումը: Սուրբ Երրորդությունը, որտեղ համարժեքորեն միավորված են Հայր Աստվածը, Որդին եւ Սուրբ Հոգին, ինչը օրինակն է այն բանի, թե ինչպես **երեք** թիվը կարող է փոխարինել **մեկ** թվին՝ առավել բազմապլան, հզոր միավորումի դեպքում: Տիրոջ՝ երկրի վրա քարոզչության երեք տարին: Հոյս, Հավատ, Սեր քրիստոնեության առաքիլությունները, երեք մոգերը, Պետրոսի երեք ուրացումները, երեք խաչյալները, Տիրոջ հարությունը՝ երեք օր հետո, Տիրոջ՝ երեք հայտնությունները, երեք Մարիամները, երեք հրեշտակապետերը եւ այլն:

Խորհրդանշանների ընդհանրական համակարգում երեքը նշանակում է համարություն, ներդաշնակություն, ամբողջություն, որոշման կայացում, ստեղծարարություն, ստեղծագործական ներուժ,



բազմակողմանիություն, ամենագիտություն, ծնունդ, կյանք եւ վախճան, մարմին, շունչ եւ հոգի, երկնային, երկրային եւ ստորգետնյա:

Մտում է ավելացնել, որ Տերը միանգամայն մտածված էր երեք անգամ ծնկել աղոթքի: Դա, հանուն մարդկության փրկու-

թյան, մահվան գնալով՝ Իր վերջնական որոշումը կայացնելու համար էր: Եվ պատահական չէր, որ երկրորդ անգամ, երբ նա սկսեց աղոթել «... երկնքից երեւաց մի հրեշտակ եւ ուժ էր տալիս նրան»: Որոշումը կայացած էր...

*Շարունակելի
Սատղիկ ՍՍՍԲՈՆՅԱՆ*

Սկիզբը՝ էջ 4

Իսկ Արշամ Տատրյանին ուղղված՝ 1936 թ. 29 դեկտեմբերի թվակիր նամակում Թեքեյանն զգուշացնում է, որ պետք է ուշադիր լինել, որ իր մայրը չիմանա (Ա. Տատրյանը դժբախտ դեպքի հետեւանքով կորցրել էր իր տեսողության մեծ մասը - Ա. Ա.), քանի որ «շատ պիտի յուզուի եւ տագնապի»: Այդ նամակում Թեքեյանը պատմում է նաեւ իր մոր մասին. «Իմ մայրս բարեբախտաբար ծեր էր, երբ պատերազմէն վերջ Պոլիս դարձայ ու անգամ մը միայն հարցուց, թե ինչո՞ւ քիչ մը ճերմակ է մէկ աչքիս բիրը, եւ թէ նո՞ւազ լաւ կը տեսնեմ արդեօք այդ աչքով. երկու բառով ապահովուցի, եւ ա՛յ ատկէ վերջ չխօսեցայ այդ մասին» (էջ 409): Իր դէմ կատարված այդ հարձակումը (գիշերով Թեքեյանի գլխին խփել էին երկաթե ձողով եւ ընկած թողել ամառի փողոցում - Ա. Ա.) հետագայում՝ 1922-ին եւ 1925-ին, բանաստեղծի համար խթան դարձավ գրելու «Մարկ Ֆորթուկի արկածը» անավարտ վիպակը (տպվել է Կ. Պոլսի «Բարձրավանդ» հանդեսում) եւ հայ գրականության չքնադ գործերից մեկը՝ «Մէկ հատիկ»:

Իմ մեկ հատիկս հիմա, որ կոհտես գիս վիստ

Յայելիին ջրհորեն

Բեգի նման ու քեզմով կնայիմ ես այլ վրադ

Երկարորեն, ծակորդեն...

Աչքի վիրահատություն տանելով եւ երեք շաբաթ բուժվելուց հետո Թեքեյանը դուրս է գրվում հիվանդանոցից: Որոշ ժամանակ անց Փարիզի Ազգային պատվիրակությունը նրան ուղարկում է Կիպրոս՝ Արեւելյան (հայկական) լեգեոնի կազմակերպական աշխատանքներին մասնակցելու եւ Նիկոզիայում կուսակցության մասնաճյուղ հիմնելու համար: Այստեղ է մնում շուրջ ութ ամիս, աջակցում Կիլիկիա մեկնող կամավորական ջոկատներին: Թեքեյանն ինքը անդամագրվում է ճակատ մեկնողների շարքերին (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս ԳԱԹ, Կ. Թեքեյանի ֆոնդ, թ. 64, էջ 595-609), եւ միայն մեծ դժվարություններով են նրան հետ պահում այդ մտքից:

1918-ի տարեկգրին Երուսաղեմը գրավվում է դաշնակից զորքերի կողմից. Թեքեյանն այս անգամ ուղարկվում է ավերված Երուսաղեմ՝ Ազգային պատվիրակության եւ անգլիական զինվորական հրամանատարության միջեւ համագործակցություն ծավալելու եւ հայ գաղթականների վիճակը կարգավորելու նպատակով: Ինչպես գրում է Թեքեյանը, Երուսաղեմի «... ամբողջ շնորհը, մաքրութիւնն ու մեծութիւնը Յիսուս հետը առէր երկինք համբարձէր էր» (էջ 200): Այստեղ Թեքեյանը հանդի-

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵՋ ԱՌԿԱՆ ՄԻ ԿՅԱՆՔ

Նվիրվում է Վահան Թեքեյանի ծննդյան 140-ամյակին

պում է ունենում դաշնակից զորքերի հրամանատար Ալեքսի հետ՝ հայ ժողովրդի ազգային իրավունքների հարցերով: Երկու ամիս մնալուց հետո՝ օգոստոսին, վերադառնում է Եգիպտոս եւ վերստանձնում «Արեւի» խմբագրապետությունը:

Այս ընթացքում Թեքեյանն անդամակցում է հասարակական ու ազգային մի շարք կառույցների՝ «Եգիպտահայ նպաստամատույցին», «Յայ ակումբին», Կ. Պոլսի Ազգային ժողովին, «Ազգային միությանը», Պողոսյան վարժարանի հոգաբարձությանը: Եգիպտոսի ազգային միությունը Թեքեյանին ընտրում է իր ներկայացուցիչը՝ Փարիզի ազգային պատվիրակությունում (նախագահ՝ Պողոս Նուբար փաշա) աշխատելու համար: 1919 թ. դեկտեմբերին Թեքեյանը մեկնում է Փարիզ, այստեղ Ա. Չոպանյանի հետ համագործակցում «Յայ ազգային ազատական միության» ստեղծման համար, որի նպատակն էր միաբանել արտասահմանում գործող բոլոր հայ կուսակցություններին ու խմբավորումներին: Պաշտոնի բերումով նույն տարին մեկնում է Երեւան՝ Առաջին հանրապետության կառավարական շրջանակների հետ բանակցություններ վարելու թուրքահայերին վերաբերող խնդիրների եւ 1918-ի մայիսի 28-ի հռչակագրի հետեւանքով կառավարության եւ խորհրդարանի նոր կազմեր ստեղծելու շուրջ: Այստեղ Թեքեյանը բանախոսում է Դ. Վարուժանի ստեղծագործությունների մասին, հանդիպում է Կ. Չարյանի հետ, ով այստեղ էր գտնվում որպես իտալական թերթերի թղթակից: Նրանք այցելում են Գեւորգ Ե Կաթողիկոսին: Իր երեւանյան բանակցությունների վերաբերյալ, որը քիչ հաջողություններ ունեցավ, Թեքեյանը ծավալում հաշվետվություն է ներկայացնում Ազգային պատվիրակությանը եւ հունիսին հրաժարական տալիս:

1919-ը Թեքեյանի կյանքի նշանակալից տարիներից մեկն է: Փարիզում նա տպագրում է բանաստեղծությունների «Կես-գիշերեւ մինչեւ արշալոյս» գիրքը, որը արտահայտում է եղեռնի արհավիրքների պատճառած մտորումներն ու ապրումները, դրանց գեղարվեստական անդրադարձումները հեղինակի ներաշխարհում:



Ա. Չոպանյանին ուղղված 1918 թ. հուլիսի 20 թվակիր նամակում Թեքեյանը, խոսելով պատրաստվող գրքի մասին, այն բնութագրում է որպես «վկայարան մեր այս քանի մը տարուան մէջ կրած յուզումներուն» (էջ 200):

1920-ի տարեվերջին Թեքեյանը վերադառնում է Կ. Պոլիս, ընտրվում Յայ սահմանադրական ռամկավար կուսակցության կենտրոնական վարչության անդամ, ստանձնում «Ժողովրդի ձայնը» թերթի խմբագրապետությունը՝ թերթում տեղ տալով նոր-նոր գրական կյանք մտնող Չ. Սյուրմեյանին, Վ. Շուշանյանին, Չ. Որբունուն, Ն. Սարաֆյանին, Պ. Չարյանին եւ այլոց: Սկսում է ձեռնարկել Ռամկավար եւ Ազատական կուսակցությունների միացման գործը, որն իրականություն էր դառնալու 1921-ի հոկտեմբերին:

1921 թ. օգոստոսին Սկյուտարի հայտնի հրդեհի պատճառով այրվում է Թեքեյանի ձեռագրերի մի մասը: Նույն ամսին վիրահատության է ենթարկվում: Նույնամբերին Յոզի. Թումանյանը՝ որպես Յայ օգնության կոմիտեի (ՅՕԿ) նախագահ, ժամանում է Կ. Պոլիս՝ Յայաստանին սննդամթերք, դե-

ղորայք, հագուստ եւ այլ իրեր հայթայթելու համար: Նրա պատվին կազմակերպված թեյասեղանի ժամանակ միտք է հղացվում ստեղծել «Յայ արվեստի տուն» միությունը, որը պիտի համախմբեր ինչպես արեւմտահայ, այնպես էլ աշխարհի չորս ծագերում ցրված հայ գրողներին ու արվեստագետներին, կազմակերպեր նրանց գործերի տպագրությունն ու ցուցադրումը, նպաստեր հեղինակների ճանաչմանը: Նախագահ է ընտրվում Յոզի. Թումանյանը, ատենապետ՝ Վ. Թեքեյանը: Արվեստի տան անդամներից են դառնում Կ. Չարյանը, Փ. Թերլեմեզյանը, Յ. Օշականը, Յ. Ը. Սիրունին եւ այլք:

1922-ի սեպտեմբերին Թեքեյանը ընտրվում է Ազգային Կեդրոնական վարժարանի տեսուչ, դառնում Ազգային երեսփոխանական ժողովի անդամ, Յ. Օշականի, Շ. Պերպերյանի, Գ. Գավաֆյանի հետ մասնակցում Կ. Չարյանի հիմնադրած «Բարձրավանդ» հանդեսի աշխատանքներին, որի առաջին համարում տպագրում է «Մայրերը» թատերգությունը, ուր պատկերվում են Արփ. Արփիարյանի եւ Վահե Արզույանի մայրերի ողբերգական կացությունը (վերջինիս որդին սպանել էր առաջինի որդուն): Ուշագրավ է, որ Թեքեյանը հանդեսի խմբագրական կազմին անվանում է «հիմնադիր-տիրացուներ», քանի որ նրանք ոչ միայն չպիտի վարձատրվեին, այլև իրենք 25-ական ոսկի պիտի տային ամսագիրը լույս ընծայելու համար:

Ինչպես ողջ Թուրքիայում, այնպես էլ Կ. Պոլսում քաղաքական վիճակը գնալով ողբերգական էր դառնում: Անատոլիայում ծավալված քեմալական շարժումն արդեն հասել էր մայրաքաղաքի մատույցները: Թեքեյանը շարունակվում էր լույս տեսնել հայ մամուլի գեղանկարչական օրհասի վերջին պահերն էր ապրում: Մարդիկ նորից են բռնում փախուստի ճամփան: Կ. Պոլսում գտնվող հազարավոր որբեր ապաստան են գտնում Յունաստանում:

*Շարունակելի
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Ներսես Շնորհալու հանելուկներ

Սկիզբը՝ էջ 6

*Տղայն չուտեր բայց միայն հուր,
Մեծին ազաւըն տայր ապուր,
Յեծեալ հրեղէն ձի ու գնայ սուր,
' Ի ինքն ի յամայոյն հոտ մեզ ջուր:*

Թեւ ժողովրդական տարրերը նկատելի են որոշ «առակների» մեջ, բայց սրանք էլ, ինչպես եւ մյուսները, կրում են Շնորհալու անհատականության դրոշմը, որովհետեւ նրա ստեղծածն են: Ժողովրդական հանելուկները մշակելով՝ նա դրանք վերածել է նույնահանգ քառյակների (մեկն ությակ է): Անպաճույճ, բայց դիպուկ հանելուկներում ներկայացված առարկաների բնութագրումները դրանք վերածել են կենսական բովանդակությամբ հարուստ, իսկական փոքրիկ բանաստեղծությունների: Այսպիսով՝ ժողովրդական բանահյուսության այդ պարզ ժանրածեստ ստացել է որոշ գեղեցկություն, մի առանձին համ ու

գրավչություն, մանավանդ որ հորինված է խոսակցական լեզվով: Բերենք մի քանի բնորոշ օրինակ: Ներքոհիշյալ հանելուկում ասես տեսնում ենք կենդանի արեղանի՝ առանձնացած աղոթելիս.

*Մէկիկ հաւուկ մի կայր փոքրիկ,
' Ի ի գլուխն ուներ սեւուկ թեպրիկ,
Երթայր լըստեր ինքըն լըռիկ,
Աղօթք առնէր խիստ սրպըրիկ:*

Ահա եւ քարաշրջիկ խղճուկ այծը, որն իր մարմնով ծառայում է եւ քրճագետներին, եւ գիւնարբուներին, եւ ամենքին.

*Յամէն շըրջի ինքն ի քարեր,
Ունի ծախու մազէ քըրճեր,
Գինոյ ունի աղուոր տըկեր,
' Ի օժտեր ձըրի դանկի կոթեր:*

Չանասեր մրջյունների երկայնածիգ քարավանները նմանեցրած են հորասան

գնացող բեռնակիր էշերի քարավաններին.

*Կարի տեսայ ես ծատ կարուան,
Որ կու իջնայր ի հորասան,
Իշուին բոկիկ էր ու անփալան,
Մէկիկ հատիկ բառնան ու գան:*

Գեղեցիկ է կանաչագետ գարունը՝ իր արոտների խաշների հոտերով եւ բազմաթիվ գեր ձիերով, եւ ընդհակառակը՝ Յոմվկայի «տօթազին քարանձաւ»-ը եւ շրջակա երկրի այրող աշունը, որ ցամաքեցրել է գետի ջուրը, խանձել կամ հնձելով վերացրել է դաշտի խոտը՝ զրկելով ձիուն եւ էշին:

*Մանուկ մի կայր զօրեղ հրեղէն,
Խմեց, հատոյց զջուրն ի գետն,
Ձիուն, իշուն արար նա քէն,
Յնձեց, վերոյց գխտոն ի դաշտէն:*

*Շարունակելի
Սամվէ ԵՐԿԱՉԱՐՅԱՆ*



ԵՐԱՅԻ ԵՎ ՎՐԱՔՍԻ ՆՈՎԻՏՆԵՐԻ ԴԵՐԸ ՆՎՅՈՉ ԵՎԿՎՏԱԳՐՈՒՄ ՆՈՎ. ԹՈՒՄՎՆՅԱՆԻ ԳՆԱԿՏՈՒԹՅԱՄԲ

Ամենայն հայոց բանաստեղծ, մեծ մտածող, հրապարակախոս Յովհաննես Թումանյանն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գրած հոդվածներում խորապես հետազոտել է խորունկ բնութագրումներ է տվել հայոց հինավուրց ուսուցանողի՝ Եփրատի եւ Արաքսի հովիտների ունեցած դերակատարությանը հայոց հավաքական ճակատագրում:

1915 թ. գրած «Մեր սրբազան հովիտները» հոդվածում նա նշում է, որ թեև դեռ շարունակվում է պատերազմը, բայց Արաքսի հայ ժողովուրդը, որ հեռացել էր ռուսաց զորքի նահանջի ժամանակ, նորից ռուսաց զորքի հետ վերադառնում է իր տեղը՝ Եփրատի հովիտը: Բանաստեղծը

հա էսօր էլ մեր աչքի առջև տեսնում ենք, թե ինչպես մերթ ռուս զորքի հետ հայն է առաջ շարժվում ու լցվում Արեւելյան Եփրատի կամ Արածանու հովիտը, Արաքսի տիրույթը, մերթ թուրքն ու քուրդն են լցվում թուրք զորքի հետ միասին» (տույն տեղում, էջ 227): Այո՛, դա միշտ կրկնվել է, եւ հայ ժողովուրդը, նրա պատմական հայրենիքը կռվախնձոր են դարձել միմյաց դեմ պատերազմող արյունածարավ կայսրությունների միջև:

Արդյունքում միշտ ու մշտապես կոխկրտվել, բզկտվել, ավերակվել են հայոց հայրենիքն ու նրա բնիկ ժողովուրդը: Պատմության, անցյալի ու ներկայի ռեալ իրողությունների սթափ հաշվառումով մեծ մտա-

ն ձգտում մեր սրտերը, մեր մտքերը, մեր հոգիները: Զանգի՛ «Էստեղ են մեզ համար են ամենը, ինչ որ մի ժողովրդի դարձնում են մեծ ու գեղեցիկ, են ամենը, ինչ որ մի ժողովրդի կյանք ու ոգի են տալիս: Դեպի մայր Եփրատի ու Արաքսի հովիտները» (տույն տեղում, էջ 228):

Նույն՝ 1915 թ. գրված մի այլ հոդվածում («Հանգիստ ու լիքը հավատով») բանաստեղծը նշում է, որ սրանից շատ ավելի մեծ աղետներ ենք տեսել, շատ ավելի մեծ տարածությունների վրա, շատ ավելի երկար ժամանակներով, շատ ավելի ծանր կորուստներով, «Փոխադրվել ու գաղթողն էլ չի իմացել, թե ուր ապաստանի, ու ոչ մի տեղից էլ ոչ մի օգնություն կամ օգնության հույս չենք ունեցել: Բայց այնուամենայնիվ անց ենք կացրել եւ ամենը» (տույն տեղում, էջ 231):

Թումանյանը, կրկին հույսով ու հավատով, այն համոզմունքն է հայտնում, որ այսօր շատ ավելի բարեհաջող են պայմանները, քանի որ «Էսօր մեզ հետ է ռուսական մեծ բանակն ու բովանդակ Ռուսաստանը, նրա միջոցով էլ աշխարհի մեծագույն պետություններն ու լուսավոր ազգերը, եւ համաշխարհային թոհուրոհի մեջ՝ մեր վիճակի մասին խոսք են հանում Ռուսաստանից մինչեւ Ամերիկա, վերջապես են հաստատ հավատն էլ ունենք, որ ինչքան էլ կատաղի լինի թշնամու վայրագությունը՝ վերջինս է լինելու» (տույն տեղում, էջ 231):

Որքան էլ 1915 ավերիչ ու սեւ թվականը հոշոտիչ եղավ հայության համար, այնուամենայնիվ, հայ ժողովրդի իմաստուն գավակները, որոնց շարքում առաջին հերթին Յովհաննես Թումանյան իմաստնագույն այրը, ցուցաբերում են զարմանալի պայծառատեսություն, անխախտ կամք եւ հավատով լցվում հայ մարդու եւ Հայաստան երկրի հետագա արարիչ ապագայի հանդեպ:

Դժոխակ 1915 թվականն անգամ չսպանեց մեծ բանաստեղծի այն հավատը, որ հայ ժողովուրդը փյունիկի նման վերհանունու է համաշխարհային պատերազմի մոխիրներից: Այս առումով հատկանշա-



նշում է, որ այդպես եղել է ռուս-թուրքական եւ ռուս-պարսկական բոլոր պատերազմների ժամանակ, հայ ժողովուրդը միշտ ետ ու առաջ է խաղացել ռուս զորքի հետ միասին: Ըստ Թումանյանի՝ «Եսպետով է կարողացել եւ Էսօր էլ Եսպետով է կարողանում մեր ջախջախված, ցաք ու ցրիվ եղած ժողովուրդը հանգիստ նստելու տեղ գտնի իր հայրենիքում: Եսպետով էր, որ Արաքսի եւ Եփրատի հովիտները, մեր սրբազան հովիտներն են» (Յովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր չորրորդ, Ե., 1969 թ., էջ 226): Եփրատ եւ Արաքս գետերին նա բնորոշում է հետեւյալ կերպ. «Մեկը մեր Մայր գետն է, մյուսը՝ մեր Սրբազան գետը: Մեկի հովիտում մեր անցյալ քաղաքական կյանքն է զարգացել ու անցել, մյուսի հովիտում մեր հին ու նոր կրոններն են ծաղկել, մեր ազգային սրբությունները, մեր ազգային դպրություն-գրականությունը» (տույն տեղում, էջ 226-227): Ընդ որում՝ բանաստեղծը խորապես համոզված այն կարծիքն է հայտնում, որ Էջմիածնից թերեւս ավելի հեշտ կլինի դուրս անել հայ ժողովրդին, քան թե Արաքսի ու Եփրատի հովիտներից:

Ծողը 1915 թվականին՝ հայոց ամենամռայլ ու ողբերգական պահին, ընդգծում, արձանագրում է հետեւյալը. «Եվ հենց եւ րուպեին, երբ գրում եմ եւ տողերը, թուրք բանակն ու քրդական ալայները, որ մի քանի օր առաջ գազանաբար հոշոտեցին Չեթկանի, Մուլլա Մուլեյմանի, Կաստուրի եւ այլ գյուղերի իրենց ձեռքն անցած հայ ժողովուրդին, ռուս զորքի առջև կորից ետ քաշված՝ երախներն արյունոտ, Ղլիջ-Գյաղուկի բարձրությունները բռնած, կորից հառել են իրենց արյունակալած աչքերը ներքեւ, Եփրատի հովիտի վրա» (տույն տեղում):

Իսկ դա այն հովիտն է, ուր հեթանոս հայր՝ վարդավառ ու ծաղկազարդ պաշտել է իր Անահիտին ու Աստղիկին, իր Արամազդին ու Վահանգիսին, դա այն հովիտն է, ուր հայ ժողովուրդն իր Մեծ Տրդատի հետ միասին մկրտվել է Արածանու սուրբ ջրերում, քրիստոնեություն է ընդունել ու իր մկրտության տեղը «տաճար է կանգնել, ճակատին դրոշմել»- Ով կընկնի եւ վեմի վրա՝ կջախջախվի, իսկ ում վրա սա կընկնի՝ կհոսի ջրի պես: Էն հովիտի վրա, ուր փռված է Ձիթավի դաշտը, որի վրա էնքան ու էնքան հաղթանակներով խոյացել են Արշակունիները, Բագրատունիները, Մամիկոնյաններն ու Արծրունիները: Էն հովիտի վրա, որին շրջապատել են Ծաղկանց լեռները, Բարթողի շղթան, Նպատն ու Սուկավետը, որի վրա, իր ալեւոր գլուխը միջեւ երկինք բարձրացած՝ հսկում է Ազատ Մասիսը» (տույն տեղում):

Հիրավի, պատմության եւ պատմականի ճշմարտացի ընկալման ինչպիսի գագոցողություն է դրսևորում մեծ բանաստեղծը, որը կարող է զարմացնել անգամ ակադեմիկոս գիտնականներին: Այո՛, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, հոգեւոր-կրոնական, մշակութային ողջ կյանքն անցել է Եփրատ եւ Արաքս գետերի հովիտներում: Նրա քաղաքների, մայրաքաղաքների մշակութային կոթողների, վանքերի եւ եկեղեցիների գգալի կամ մեծագույն մասը ստեղծվել, կառուցվել է վերոնշյալ հովիտների տարածքներում, կարեւորագույն պատերազմական իրադարձությունները, ճակատամարտերը տեղի են ունեցել այստեղ:

Թումանյանը մեր պատմության ամենադժոխակ պահին հավատացած է, որ անդիմադրելիորեն դեպի այդ հովիտներն



կան է նրա հետեւյալ՝ «Դեպի մեծ կյանքը» հոդվածից մեջբերվող սույն շեշտադրումը. «Մենք՝ հայերս էլ փոքր ազգերից միսն ենք: Տաճկական բռնակալության անկումով ու Հայկական հարցի բարեհաջող լուծումով մեր առջեւ էլ նոր հորիզոններ են բացվում: Հնարավորություն ենք ստանում ապրելու շատ ավելի գեղեցիկ ու խոր գագոցմունքներով, զբաղվելու մեծ խնդիրներով, մտնելու հառաջադեմ ազգերի երբայրության մեջ ու նրանց հետ միասին երազելու կյանքի վսեմ երազները, նրանց հետ միասին մասնակից լինելու համամարդկային մեծ խնդիրների, մշակութային ազնիվ գործին ու նրանց հետ միասին գնալու դեպի մեծ կյանքը: Եվ մեր բախտավորությունն այն է, որ մենք միանգամայն ընդունակ ենք սրան, ու Էստեղ է, որ կարող ենք ասել՝ փոքր ժողովուրդ չենք մենք» (տույն տեղում, էջ 230):

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱԶԻՆԻ...

Սկիզբը՝ էջ 5
Այսպիսի պարտավորեցնող տիտղոս եւ «շքեղ» շուրջառ էին սպասվում նաեւ 600 տարի անց՝ անազատության, սակայն պետականության նոր պայմաններում օժվող աստվածընտրյալ Վեհափառին:

Նրա կաթողիկոսական 39 տարիների մշտական ուղեկից եւ ականատես Սանդրո Բեթբուդյանը հայրապետական օծության պատմական պահի կարեւոր դրվագ է փոխանցում. «Ինձ վրա շատ է տպավորվել, երբ 1955-ին՝ օծումից հետո, ծաղկյա դահլիճում միաբանները, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները եւ հյուրերը հերթով մոտենում ու համբուրում էին Վեհափառի օծյալ աչքը: Հերթը հասավ բանաստեղծ Ավ. Իսահակյանին: Վարպետը խոնարհված մոտեցավ նորաօծ Հայրապետին: Վեհափառը կարմրեց, ձեռքը քաշեց եւ փորձեց թույլ չտալ, որ մեծ եւ ծերունակարդ Վարպետն այդքան խոնարհվի:

«Սիրելի՛ Վեհափառ, ես Հայոց Հայրապետի նորաօծ աչքն եմ համբուրում, ոչ թե երիտասարդ Վազգեն եպիսկոպոսի»,- ասաց Վարպետը եւ համբուրեց Վեհափառի աչքը, այնուհետեւ երկու մեծերը գրկախառնվեցին» (Սուրբասյան Ս., Մի դափնեցող Վազգեն Ա-ի հիշատակին. հոդվածներ, հարցազրույցներ, «Նաիրի» հրատ., Եր., 2004, էջ 55):

Սա նշանակում էր, որ Մեծ Վարպետի հեռատես աչքը երիտասարդ Կաթողիկոսի մեջ տեսել էր հանուր ժողովրդի կողմից ընդունելի կերպար:

Հոկտեմբերի վեցին հոծ բազմության ներկայությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը Հայոց կատարում է 11 եպիսկոպոսների ձեռնադրություն: Երկու օր անց նրան սպասում էր եւս մի խիստ պատասխանատու ծիսակարգ:

Դեռեւս 1954-ին Գեորգ Զ Չորեքյանի կողմից նախատեսված էր Մյուռնի օրհնության արարողությունը, սակայն Կաթողիկոսի վերահաս մահը կասեցրեց սպասված Մյուռնիօրհնությունը. «1926-ին Գեորգ Սուրենյանի կատարած Մյուռնիօրհնությունն էր, երկար ժամանակ միռոն չէր օրհնուած Ս. Էջմիածնի մեջ: Վազգեն Կաթողիկոս հոկտեմբերի 8-ին (1955 թ.) 12 եպիսկոպոսներով ընկերակցութեամբ շքեղ հանդիսութեամբ եւ բազմամբոխ ժողովուրդի ներկայութեան, ս. Միռոն օրհնեց եւ հայրենի ժողովուրդին մեջ արծարծեց բարեպաշտական եռանդ» (Գրիգորեան Ս., Վազգեն Վեհափառը (իր ծննդեան յիսուներորդ եւ գահակալութեան երրորդ տարեդարձերուն առիթով), Պեյրուպ-Լիբանան, 1958, էջ 15):

Շարունակելի
Լուսինե ՅԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մանկավարժական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.03.2018թ.
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ